

դերու մէջ քիչ մը ապրողին անգամ, և որոնք կը կազմեն անոնց ընդհանուր բնաւորութեան գիծը, ներկայացնելով ընդան մարդու վարք ու բարք:

Բնագրի ամբողջական փրայեսութիւնը.— Քիւրդը մարմնով հսկայ ու մաքրով մանուկ ժողովուրդ մ'է. անոր մէջ ուժգին կը գործէ բնազդը:

Քիւրդը շատ կը սիրէ պսպղուն իրը, բաւական է որ լինի աչքը խողտող, կուրացնող: Լեզուի մէջ համրանք ունի, բայց շատ քիչ կ'իմանայ թուել ու հաշուել. դրամը չի կրնար արժէքներով որոշել. ի հարկին այդ հոգը յանձն պիտի առնէ իր հաւատարիմ ճանաչած Հայը: Հագուստեղէնի լաւ ու վատ յատկութիւնը կը ճանչնայ անոր փայլունութեան ու վաճառողի թանգ գնով պահանջելուն մէջ. հագուստեղէնը իրեն պիտի տայ իւր հաւատարիմ Հայը, վերջինս պիտի ընտրէ իր ճաշակով, ձեւել կարել տայ ու հագցնէ. հաշիւն ինքը հասկնալով ու իր մօտ պահելով:

Ձեմքի արժեք.— Քիւրդը կը սիրէ սուրն ու հրացանը. ասոնք իրեն համար անհրաժեշտ ու անբաժանելի պիտոյքներ են, որոնցմով միայն կարող է քաջագործութիւններ լսել. վրէժ լուծել ու իր գոյութիւնը պահպանել. Քիւրդը չի կրնար և չուզեր մնալ առանց զէնքի, ինչպէս ո և է մարդ առանց աչքի: Երկրորդ՝ զէնքը անոր համար հաճոյք մ'է, որովհետեւ սուրը կը չողայ ու հրացանը կը պայթի իր ուժգին ձայնովը. առաջ եկած հարուածին յաջորդող արբնթաւալը անոր կը գուարճացնէ, որովհետեւ վիպական կ'երեւայ:

Մեղքի ու արդարութեան, գթութեան կամ անգթութեան, պարտք ու իրաւունքի վրայ գաղափար չ'ունի, եթէ այդ մասին խօսուի, հետաքրքրութեամբ կը լսէ իրր օտարոտի բան մը, ու կը կ'արծէ թէ ազոնք այնպիսի իրողութիւններ են որ կը նմանուին ուրիշի աչքերուն՝ որոնցմով ինքը չպիտի կարենայ տեսնել, թէ և գոյութիւն ունենան:

Ձէնքը Քիւրդի ձեռքին կը ծառայէ նաեւ իրր խաղալիք և արդուզարդ: Քիւրդին ղէնք հայթայթողը շատ պարագաներուն՝ վաճառական հայն է: